ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Նարեկ Կարապետյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2024 թվականի հուլիսի 7-ից 10 -ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական կենտրոն (НИФИ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝
Այցը կազմակերպվել է ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների միջև 2023-2025թթ. երկկողմ համաձայնագրի 2024թ. միջոցառումների ծրագրով նախատեսված «ՀՀ մակրոտնտեսական և բյուջետային կանխատեսումների համակարգի զարգացում» ուղղության շրջանակներում: Այցի շրջանակներում մասնակցել եմ հարկային եկամուտների (ըստ հարկատեսակների) կանխատեսումների ամփոփ արդյունքների քննարկմանը, ինչպես նաև՝ ՀՆԱ պահանջարկի բաղադրիչների կանխատեսման գործիքակազմի կատարելագործման աշխատանքների արդյունքների վերաբերյալ սեմինարներին:

5. Քննարկված թեմաները՝

- Երկկողմ համագործակցության շրջանակներում գործող ծրագրերի ընթացքը,
- «ՀՀ մակրոտնտեսական և բյուջետային կանխատեսումների համակարգի զարգացում» ծրագրի ընթացիկ արդյունքները,
- ՀՀ Ֆինանսների նախարարությունում իրական հատվածի կանխատեսումների համար ներկայումս կիրառվող մոդելային համակարգը,
- ՌԴ ՖՆ գիտահետազոտական կենտրոնի կողմից մշակված կիսակառուցվածքային մակրոտնտեսական մոդելը և դրա միջոցով կանխատեսումների իրականացումը,
- Հարկաբյուջետային կանխատեսումների և ռիսկերի գնահատման համակարգը ՌԴ ֆինանսների նախարարությունում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝
Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության շրջանակներում առկա ծրագրերի ընթացքը: ՌԴ ՖՆ գիտահետազոտական կենտրոնի մասնագետների կողմից ներկայացվել են կատարված աշխատանքների արդյուքները, իսկ

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչները ներկայացրել են մեր կողմից ներկայացվել են ներկայումս ներդրված կանխատեսման ու վերլուծությունների համակարգերը, ինչպես նաև դրանց զարգացման ուղղությամբ ընթացող աշխատանքներն ու հետագա պլանները: Ծավալվել է քննարկում համագործակցությունը արդյունավետորեն շարունակելու և ՀՀ ՖՆ տեսակետից կիրառական արդյունքներ ստանալու ուղղությամբ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Նարեկ Կարապետյան՝ **15 հուլիս, 2024թ**